



MA in Human Rights  
and Democratization  
Eastern Partnership Regional Programme



European Union

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 սեպտեմբերի, 2011  
Երևան

### **«Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում մագիստրոսական ծրագրի» Առաջին դասընթացի պաշտոնական մեկնարկ**

Սեպտեմբերի 14-ին պաշտոնապես կմեկնարկի Եվրոպական Միության աջակցությամբ հիմնադրված «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը», որն ունի 22 ուսանող: Ծրագրին մասնակցող 11 ուսանողները Հայաստանից են, իսկ մնացած 11-ը ժամանել են Բելառուսից, Մոլդովայից, Ուկրաինայից, Վրաստանից և Ռուսաստանից:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի կողմից տրամադրված դրամաշնորհով հիմնադրված ծրագիրը, ուսանողներին հնարավորություն է ընձեռելու ձեռք բերել խոր գիտելիքներ և գործնական հմտություններ մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում:

Դասընթացի պաշտոնական մեկնարկը տեղի կունենա ԵՊՀ գիտական խորհրդի դահլիճում սեպտեմբերի 14-ին ժամը 12:50-ին: Երևանի պետական համալսարանը և Հայաստանում ԵՄ Պատվիրակությունը կողջունեն նոր ուսանողներին: Միջոցառումը բաց է բոլոր հետաքրքրված լրատվամիջոցների համար:

Սույն մագիստրոսական ծրագիրը իրականացվում է Արևելյան գործընկերության մասնակից չորս պետությունների առաջատար համալսարանների կողմից՝ Երևանի պետական համալսարան (համակարգող), Տարաս Շևչենկոյի անվան Կիևի ազգային համալսարան, Բելառուսի պետական համալսարան, Մոլդովայում եվրոպական քաղաքական և տնտեսական հետազոտությունների համալսարան (USPEE): Երևանում մեկ տարի ուսանելուց

հետո, ուսանողները կշարունակեն իրենց ուսումը նշված գործընկեր համալսարաններից մեկում:

«Հայաստանում, Բելառուսում, Մոլդովայում և Ուկրաինայում Մարդու իրավունքներ և Ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը հանդիսանում է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ աշխարհի տարբեր մասերում հիմնադրված «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագրերից թվով 6-ը, որը ներառում է ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանը: Ծրագիրը պաշտոնապես հիմնադրվել է 2010թ. հոկտեմբերին և մի քանի ամիս անընդմեջ աշխատանքներից հետո 2011թ. սեպտեմբերի 15-ից մեկնարկում է ուսումնական տարին: Դրամաշնորհի ընդհանուր արժեքն է 1.276.000 Եվրո, իսկ ծրագրի գործողության ժամկետը 2 տարի է:

Ծրագրի կառուցվածքի, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի, ինչպես նաև ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին առավել ամփոփ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք այցելել [www.regionalmaster.net](http://www.regionalmaster.net) էլ. կայքը կամ զանգահարել (+374 10) 550810, 576326 հեռախոսահամարներով: